ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

24.01.2014 թվականի N 09-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի <ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ> N 10-Ն ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 9-ի <Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին> N 10-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով

Հրամայում եմ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի գործունեության ծրագրի /այսուհետ Ծրագիր/ Հայաստանի Հանրապետության էնէերգետիկայի և բնական պաշարների նախարարության (ՀՀ ԷԲՊՆ) միջոցառումների /հավելված N1/ և գերակա խնդիրների /հավելված N2/ վերահսկողների ու կատարողների ցանկը:
2. Սույն հրամանի N1 հավելվածում նշված վերահսկողներին ու կատարողներին՝ սահմանված ժամկետներում ապահովել հաստատված միջոցառումների կատարումը:
3. Սույն հրամանի N2 հավելվածում նշված կատարողներին՝ եռամսյակի ավարտից հետո 2-օրյա ժամկետում, համապատասխան վերահսկողների հետ համաձայնեցված, գերակա խնդիրների կատարման ընթացքի մասին տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ ԷԲՊՆ աշխատակազմի զարգացման վարչություն:
4. ՀՀ ԷԲՊՆ աշխատակազմի ղեկավար Կ. Ղահրամանյանին՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 5-օրյա ժամկետում ապահովել տվյալ եռամսյակում Ծրագրի միջոցառումների իրականացման և գերակա խնդիրների կատարման ընթացքի մասին ամփոփ տեղեկանքի ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարություն:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը թողնում եմ ինձ:

ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

????? ?????
Jan 24 2014 4:42 PM

Հավելված N 1

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունք	Վերահսկողներ	Կատարողներ	Ժամկետը
1	2	3	4	5
1/14 «Գազաբաշխիչ համակարգում ապօրինի սպառման դեպքերում սպառված բնական գազի ծավալի հաշվարկման մեթոդիկան հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Կսահմանվի գազատարներում տեղի ունեցած պատահարների ընթացքում բնական գազի արտահոսքի հաշվարկման միացյալ մեթոդաբանությունը	Ա. Գալստյան	Զարգացման վարչություն	մարտի 3-րդ տասնօրյակ
2/15 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչության կողմից անցկացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» N 1569-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Ստուգաթերթերի մեջ կներառվեն ստուգման ենթակա էներգատեղակայանքների տեխնիկական վիճակն ավելի ճշգրիտ բնութագրող տեխնիկական նորմերի պահանջներ	Կ. Ղահրամանյան	Էներգետիկայի պետական տեսչություն	հունիսի 3-րդ տասնօրյակ

3/16 «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի դրույթները կհամապատասխանեցվեն «Էներգետիկայի մասին», « Հավատարմագրման մասին» և «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքների դրույթներին: Կսահմանվեն էներգետիկ փորձաքննության պարտադիր իրականացման դեպքերը և պայմանները:	Ա. Գալստյան	Զարգացման վարչություն	սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ
4/17 «Կենցաղային նպատակներով օգտագործվող գազի սարքերի անվտանգության պահանջները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 7-ի N 1458-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Կսահմանվեն կենցաղային նպատակներով օգտագործվող գազի սարքերի անվտանգության պահանջները, ինչը կհանգեցնի գազի կենցաղային սարքերի անվտանգության աստիճանի բարձրացմանը:	Ա. Գալստյան	Զարգացման վարչություն	հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ
5/18 «Փոքր հիդրոէլեկտրակայաններում տեղադրվող սարքավորումներին ներկայացվող տեխնիկական պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Նոր կառուցվող, վերակառուցվող և վերազինվող ՓՀԷԿ-ների լիցենզավորման փուլում կսահմանվեն փոքր հիդրոէլեկտրակայաններում տեղադրվող սարքավորումներին ներկայացվող տեխնիկական պահանջները՝ ելնելով միջազգային փորձի ուսումնասիրման	Ա. Գալստյան	Զարգացման վարչություն	նոյեմբերի 3-րդ տասնօրյակ

	արդյունքներից՝ օրինակ Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողովի (IEC - International Electrotechnical Commission) ստանդարտների կիրառում:			

Հավելված N 2

Ց Ա Ն Կ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ

Գերակա խնդիրները	Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը	Վերահսկողներ	Կատարողներ	Ընթացքի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում
1	2	3	4	5
1/4. Տարածաշրջանային ինտեգրացում	- Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցում	Ա. Սիմոնյան	Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն	Յուրաքանչյուր եռամսյակ
	- Վրաստան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման ծրագրի նախա-պատրաստական աշխատանքների իրականացում	Ա. Գալստյան	Զարգացման վարչություն	Յուրաքանչյուր եռամսյակ
2/5.Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի՝ լրացուցիչ ժամկետում շահագործման նախապատրաստումը	- Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի սարքավորումների և շինությունների զննման և մնացորդային ռեսուրսի գնահատման աշխատանքների իրականացում	Ա. Գալստյան	Ատոմային էներգետիկայի վարչություն	Յուրաքանչյուր եռամսյակ